12822

1872

ՆՈՐ-ՋՈՒՂԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑԱՑ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ.

1872

Նոր-Ջուղայի Ազգային Երկսեռ Դպրոցաց Հոգաբարձութիւնը, ի նկատի ունենալով որ Խորէն վարդապետ Տէր Վարդանեանը այլ և այլ անհիմն ու զրպարտիչ կոչեր և լուրեր է տարածում իր վրէժխնդրական կրքերին բաւականութիւն տալու և միամիտներին ու անծանօթներին մոլորեցնելու համար, անհրաժեշտ է համարում համառօտ կերպով ներկայացնել ժողովրդին այն ցաւալի և անպատուաբեր դէպքը, որ պատահեց Ջուղայում շնորհիւ Խորէն վարդապետի վրիժառու և խռովայոյզ բնաւորութեան։

Յուլիս ամսի սկզբներին Խորէն վարդապետն առանց Հոգևոր իշխանութեանը յայտնելու, ինքնագլուխ եկաւ Համադանից։ Գալու օրից սկսեց խանգարել Ջուղայի խաղաղ ու կանոնաւոր կեանքը իր վարմունքով. մի այնպիսի անպատուաբեր դիրք բռնեց, որ նրա փոխարէն ուրիշներն էին ամաչում։

Պահանջում էր, որ Ջուղայի ուսուցիչներից մէկի (Ա. Աթայեանի) դէմ ունեցած իր բողոքը քննուէր, որ «Մշակ» լրագրի №40-ում յօդուած էր տպել Խորէն վարդապետի դէմ։ Փոխանակ այդ յօդուածին Համադանի ժողովրդի և Կրթասիրաց Ընկերութեան վկայութեամբ մի պատշաճաւոր պատասխան տալու, հոգևորականին անվայելու անսստման վրէժխնդրութեամբ լցուած եկել էր Ջուղա ուզղակի կռուելու համար։ Որչափ աշխատում էինք մեղմացնել, յորդորում էինք հանգիստ մնալ, նա կրկին իր սպառնալից անտեղի խօսակցութիւնը շարունակում էր։ Երևում էր, որ յօդուածը մի առիթ էր, իսկ նպատակը բոլորովին ուրիշ։

Տեսնելով, որ Խորէն վարդապետը շարունակ սպառնալիքներով էր խօսում ուսուցչի հասցէին և ենթադրելով, որ նրա և ուսուցչի գործը քննելով հնարաւոր կլինի վէճին խաղաղ վախճան տալ, Հոգաբարձութիւնը Խորէն վարդապետի ցանկութեամբ համաձայնեց միջամտել այդ խնդրում։

Հոգաբարձական ժողովներում ծանօթացանք գործի հետ, հարցափորձի ենթարկեցինք Խորէն [illegible] թէ միասին՝ Հոգաբարձական ժողովներում։ Կազմուեց անկողմնապահ արձանագրութիւն և վաւերացուեց Նախագահ Դեր-Բագրատ Վարդապետի և բոլոր ութը Հոգաբարձուների ստորագրութեամբ. պատճէնը յանձնուեց Խորէն վարդապետին։ Շատերս համոզուած էինք, որ Ջուղայում քննութիւնը դադարով կ'վերջանայ և Խորէն վարդապետը կհեռանայ Համադան, քանի որ բազմիցս նա խոստացել էր մեզ ու իր «ազնիւ խօսքով» և «ամենամեծ երդումով» շարունակ հաւաստիացնում էր թէ՝ կհեռանայ արձանագրութիւնը ստանալուց անմիջապէս յետոյ առանց Ջուղայի խաղաղութիւնը վրդովելու։ Երբ կասկած էինք յայտնում իր վարմունքը տեսնելով, մինչ իսկ իրեն յուզուած էր ձևացնում, որ իր «ազնիւ խօսքին» անպայման հաւատ չենք ընծայում։ Բայց դժբախտաբար պիտի ասենք, որ մեր կասկածը ճշմարտութեան փոխեց Խորէն վարդապետը և մեզ ուզղակի խաբեց։

Թէև քննութեան ընթացքում անհանգիստ էր, կրքով ու քինախնդրութեամբ էր լցուած և մենք միշտ աշխատում էինք բարեկամական խորհուրդներով մեղմացնել, հանգստացնել և ինքն էլ այնպէս էր ցոյց տալիս թէ՝ մեր աշխատանքը նշանակութիւն է ունենում, սակայն ինչ որ տեսանք հոգաբարձական արձանագրութիւնը ստանալուց յետոյ, այդ արդէն աներևակայելի խայտառակութիւն էր և անպատուաբեր վարմունք նրա կողմից։ Ցաւում ենք ասելն, որ կարծէք ինքը ոչինչ չէր զգում։ Սմեն ինչ ցանկանում էր «տակնուվրայ» անել, որպէս ինքն էր սիրում կրկնել՝ իբրև մեծ քաջագործութիւն, չմտածելով, որ անպատիւ գործեր ու չարութիւն անելը հեշտ է, (որն այս դէպքում իր նպատակն էր դարձրել), քանթէ բարութիւն և հոգևորականի պատուին համապատասխանող գործ։

Սկսեց անհիմն խօսքեր ուղղել Հոգաբարձութեանս, սուտ ու զրպարտիչ նամակներով ի զուր վրշտացնել Ա. Փոխանորդին. թէ Հոգաբարձութիւնը ամբողջապէս չի քննել իր դատը Աթայեան ուսուցչի դէմ և որպէս թէ «արդարութիւնը» ոտնատակ է եղել և այլն։ Այո, ոտնատակ եղաւ թէ արդարամտութիւնը և թէ ազնուութիւնը Խորէն վարդապետի անպատուաբեր վարմունքով ու գործերով և իր անորակելի վրէժխնդրական ոգով։ Այո, բազմակողմանի չպարզեցինք իր զայն ու բնաւորութիւնը,

12822

12822

քանի որ իր հետ շատ մեղմ ու քաղաքավարի ենք վարուել հէնց սկզբից. մեղմաբար ենք նկատողութիւններ արել և որոշ չափով ձեռնպահ ենք մնացել յօդուածի մի քանի կէտերում ևս, տեսնելով թէ հոգևորական է, վարդապետ է, որի մասին դժբախտաբար ինքն ամենևին չէր մտածում։

Երևի հէնց մեր այս քաղաքավարի վարմունքի պատճառն էր, որ Խորէն վարդապետը քաջութիւն է համարում խայտառակ ձևով խօսել և գրգռել միամիտներին ու գործի հետ անծանօթներին, մոռանալով իսպառ իր կոչումը։ Անկեղծութեան ու պարզութեան դիմակի տակ դիմում է ամեն տեսակ դատապարտելի միջոցներին՝ իր վրէժխնդրութեանը և փառամոլութեանը բաւականութիւն տալու համար։

Առաջնորդական Փոխանորդ Տ. Բագրատ վարդապետն էլ տեսնելով, որ Խորէն վարդապետը սկսել է խայտառակութիւններ անել և ոչ մի բան չի ազդում նրա վրայ, հեռագրել էր Ազգիս Վեհափառ Կաթողիկոսին և Սրբազան Առաջնորդին իր հրաժարականը «Խորէն վարդապետի անկարգութեան պատճառով»։ Նոր-Ջուղայի Ազգային Հաստատութեանց Վարչութիւնները (30 անդամներ) հեռագրեցին Վեհափառ Կաթողիկոսին և Սրբազան Առաջնորդին, որ Ա. Փոխանորդի հրաժարականը չընդունուի և Խորէն վարդապետին հրամայուի գնալ Համադան։ Տխուր ենք յայտնել, որ Սրբազան Առաջնորդի հեռագրական հրամանով չգնաց և շարունակեց իր դատապարտելի քայլերը. գրգռում էր մարդոց, զրպարտութիւններ անելով, մոլորեցնում էր միամիտներին և համախմբում մի քանի չարամիտներին, իրեն էլ երբեմն ձևացնելով իրաւունք ու արդարութիւն պաշտպանող։ Շարունակ ման էր գալիս այնպիսիների տները, որոնք մի որևէ բանով երբևիցէ վշտացել էին Առաջնորդարանից կամ Ա. Փոխանորդից, Հոգաբարձուներից կամ Ազգային Դպրոցներից։ Մի խօսքով միջոցների մէջ ոչ մի խտրութիւն չէր դնում իր վրէժխնդրութեան կրքերին յագուրդ տալու և Ջուղայում մի մեծ խռովութիւն յառաջ բերելու համար։ Կեղծ կերպով հալածուած ձևանալն էլ իր համար մի լաւ միջոց էր ընտրել մարդկանց մոլորեցնելու և գրգռելու համար։ Առանց Հոգաբարձութեանը մինչ իսկ յայտնելու, Կենդրոնական Դպրոցում Խորէն վարդապետը ինքնագլուխ ժողով է հրաւիրում՝ նախապէս ստութեամբ լի կոչ հրատարակելով մարդոց գրգռելու համար։ Շատ քչերն են գնում. ներկայ է լինում Թադէոս Տէր Դիոնէսիոսի նման մի խառնակիչ և մեր հաստատութեանց համար վնասակար մարդն ևս, որին չափազանց ուրախացրել էր...

Ցաւելով պիտի ասենք, որ ամօթն ու պատկառանքը և իր կոչման նշանակութեան ըմբռնողութիւնը բոլորովին կորցրել էր Խորէն վարդապետը։

Նորին Վեհափառութիւն Սրբազնագոյն Կաթողիկոսը հեռագրով խիստ հրամայել էր (սեպտեմբերի $^{1}/_{14}$-ին) Խորէն վարդապետին՝ անմիջապէս հեռանալ Համադան։ Խորէն վարդապետը փոխանակ հրամանը կատարելու, մի զրպարտիչ կոչ է հրատարակում (բազմաթիւ օրինակներով), որով միանգամայն անհիմն կերպով յարձակւում է մեզ, Ա. Փոխանորդի և Խորհրդարանի վրայ, որպէս թէ մենք մոլորեցրել ենք Վեհափառ Կաթողիկոսին, Գերապատիւ Առաջնորդին, և աւելացնում է որպէս թէ ինքը յարգում է «Հայոց Հայրիկի հրամանը». այս կէտն ևս յիշում է հեռաւորներին խաբելու համար։ Մեղադրում է ուրիշներին մոլորեցնելու մէջ, որի տգեղ ու ցաւալի օրինակները հէնց ինքը տուեց Ջուղայում՝ իր երկու երեք կրքոտ համախոհներով, որոնք նոյնպէս լաւ միջոց էին գտել Խորէն վարդապետի միջոցով իրենց անձնական «վրէժը» լուծելու։

Եւ վրէժն աւելի խիստ ու հեղինակաւոր ձևով լուծելու համար չքաշուեցին իրենց անձնական կրքերին կուսակցական գոյն տալ ու այլ քաղաքներում ևս անտեղի շփոթութիւններ յառաջ բերել հեռագիրներով. բայց այդ կեղծիքն ևս կբացուի և կ՚դատապարտեն հէնց իրենց։

Գերապ. Առաջնորդական Փոխանորդի հրաւիրմամբ կայացաւ ընդհանուր ժողով (սեպտ. $^{2}/_{15}$-ի երեկոյեան). ներկայ էին աւելի քան 300 հոգի. չնայելով Խորէն վարդապետի բարձրաձայն գոչումներին ու պահանջներին նոր քննութիւն կատարելն միանգամայն աւելորդ համարուեց. կրկին յայտնուեց Ազգիս Վեհափառ Կաթողիկոսի բարձր հրամանը Խորէն վարդապետի հեռանալու համար։ Ջուղայի դէպքի մասին որոշում եղաւ։

Սակայն Վեհափառ Կաթողիկոսի խիստ հրամանին հնազանդուող Խորէն վարդապետը ամեն տեսակ անտեղի աղմուկներ և անպատուաբեր քայլեր անելուց յետոյ, չ՚ցանկանալով ընդհանուր ժողովի որոշման կատարուելն ևս, և դժգոհ լինելով, հետևեալ օրն առաւօտեան (սեպտեմբերի $^{3}/_{16}$-ին) գնաց Սպահան և գանգատուեց Ռուսաց Կոնսուլատին (իր կարծիքով ցաւեցնելու համար Առաջնորդական Փոխանորդին, Հոգաբարձուներին, այլ ազգային Վարչութեանց անդամներին և ժողովրդից շատերին)։ Տարան Կոնսուլատ ուսուցչին ևս։ Ուսուցիչը պարզ յետ է վերցնում իր յօդուածը (առանց ներողութիւն խնդրելու), իսկ Խորէն վարդապետն էլ Փոխ-Կոնսուլի միջոցով ստորագրութիւն է տալիս, որ այլևս յօդուածագիր Աթայեանի դէմ ոչ մի պահանջ չունի և հարցը վերջացրած է համարում։

Քանի որ ի վերջոյ այդ «խաղաղ» միջոցին պիտի դիմէր Խորէն վարդապետը իր երկու համախոհներով, աւելի լաւ չէր անի՝ առանց ցաւալի աղմուկներ ու առանց ահագին խռովութիւն բարձրացնելու, հէնց սկզբից դիմէր Սպահան Ռուսաց Կոնսուլատին, մանաւանդ որ իր առաջին պաշտօնական գրութեամբ Համադանից յայտնել էր Առաջնորդական Փոխանորդ Տ. Բագրատ վարդապետին, որ ինքն արդէն դիմել է «Ռուսաստան մարմնաւոր իշխանութեան՝ դատի ենթարկելու յօդուածագիր երկու պարոններին՝ Աթայեանին և Տէր Ներսիսեանին»։

Սկզբից ևեթ առաջարկում էինք Խորէն վարդապետին խաղաղ միջոցներ, յորդորում էինք առանց աղմուկների ու խռովութեանց գործը վերջացնել իր համար պատուաբեր կերպով, սակայն ինքը բացէ ի բաց մերժում էր. վրէժխնդրութեան ու փառամոլական զօրեղ կիրքն այլ բան էր թելադրում, որով ամենից շատ իրեն անպատուեց ու խայտառակեց հէնց իր ծանօթների մօտ։

Խորէն վարդապետը Ջուղայից հեռանալու ժամին (սեպտեմբերի 7-ին), իր ստորագրութեամբ երբև մնաք բարով ցրուեց մի գրութիւն գլխաւորաբար ուղղած Գերապ. Առաջն. Փոխանորդի, Խորհրդարանի և Հոգաբարձութեանս դէմ. տխուր ենք ասելը, որ դա ուղղակի հայհոյալից, զրպարտութեամբ ու կեղծութեամբ լի մի գրութիւն է Խորէն վարդապետի գրչի տակից ելած։ Դորանով ամենի մօտ իր իսկական նախանձոտ գոյնն ու փառամոլ ձգտումները պարզեց։ Աշխատում է իր անձնական կրքերը ծածկել ժողովրդին ուղղած կեղծ խօսքերով, որպէս թէ իրաւունքներ է պաշտպանում։ Լաւ կլինի Խորէն վարդապետը ժողովրդին չծաղրի. հանգիստ թողնի և նախ ինքը սովորի ժողովրդի իրաւունքներ յարգելն ու ճանաչելը։ Իր բողոքը Խորհրդարանում չքննուեց, այլ իր իսկ ցանկութեամբ Հոգաբարձութեանս բոլոր ութը անդամները քննեցին, որոնք ընտրուած են կանոնաւոր կերպով Ջուղայի ամբողջ հասարակութեան ծխական ժողովներում։

Պէտք է հասկանայ Խորէն վարդապետը, որ իր պատիւը երբէք չի կարող վերականգնել անտեղի մեծ աղմուկ բարձրացնելով, ուրիշներին զրպարտելով ու անիրաւացի վարկաբեկ անելով։

Այսպիսի դատապարտելի ընթացք ունեցողից դեռ շատ բաներ կարելի է սպասել, մանաւանդ որ արդէն որոշ սպառնալիքներ արել է իր բռնելիք ապագայ ընթացքի վերաբերմամբ . . .

Ն.-Ջուղայի Ազգ. Երկսեռ Դպրոցաց Հոգաբարձութիւնը ցաւում է, որ Խորէն վարդապետը գործը այստեղ հասցրեց և ստիպեց այս ճշմարտութիւնները հրապարակաւ յայտնել։

Հոգաբարձութիւն

Նոր-Ջուղայի

Ազգային Երկսեռ Դպրոցաց

1907 թ. Սեպտեմբերի 9-ին

Ն-Ջուղա—Սպահան

ՊԵՏ
ՊՈՍԵԼԿՈՄ

ՄՄ Հայագիտական գրադարան
MAL011329